



Քաղաքացիության օրէնք

Աւստրիական քաղաքացիութիւն կստացի՝

A. Ճագումով B. Դիմումով կամ C. Տարածումով (ընտանիքի անդամների վրայ)

A. Ճագումով

Ծնունդով Աւստրիաի քաղաքացի կը լինի՝

1. Ամուսնացած զոյգից ծնւած երեխան, որի ծնողներից մէկը Աւստրիաի քաղաքացի է:
2. Չամուսնացած զոյգից ծնւած երեխան, որի մայրը Աւստրիաի քաղաքացուհի է:

Չամուսնացած զոյգից ծնւած երեխան, երբ հայրը Աւստրիաի քաղաքացի է,
կստանայ քաղաքացիութիւն եթէ ամուսնութիւնը վաւերացի:

B. Դիմումով

Աւստրիայի քաղաքացիութիւն ստանալու համար անհրաժեշտ են յետևեալ հիմնական պայմանները՝

- **Աւստրիական հանրապետութեան** հետ լիովին համաձայնել, հասարակական հանգիստը, կարգ ու կանոնները չխանգարել եւ ոչ մի կապակցութիւն չունենալ ահաբեկչական (տեռորիստական) խմբերի հետ:
- **Օրէնքով անբիծ** (չդատաւարուած, առանց պետական տուգանքների ինչպէս այս երկրում, այնպէս էլ արտասահմանում, առանց ծայրահեղ վարչական խախտումների):
- Աւստրիաում (կամ որեւիցէ եւրոպական երկրներում) **բնակւելու իրաւունքի արգելք** չունենալ:
- Մինչեւ հիմա ունեցած **քաղաքացիութիւնից** դուրս գալ, բացի նրանցից որ իրենց համար անկարելի է (օր. անձնական կամ տնտեսագիտական գոյութիւնը վնասւելու պարագային):
- Բաւականաչափ **ապահով ապրուստի միջոց ունենալ** (թոշակառուների նւագազոյն գումարի համաբաւասխան եկամուտ եւ վերջի 3 տարւայ ընթացքում առանց սոցիալ օգնութեան):
- **Գերմաներէն լեզւի** հաստատագիր (մակարտակ A2):
- **Դեմոկրատական կարգի, Աւստրիաի պատմութեան եւ 9 մարզերի պատմութեան մասին** հաստատագիր (քննութիւնով):

Գերմաներէն լեզւի իմացութեան վկայագիրը (մակարտակ A2) պէտք է ներկայացնել երկրում ընդունւած ուսումնական հաստատութիւններից (օր. ÖSD):

Դեմոկրատական կարգի, Աւստրիաի պատմութեան եւ 9 մարզերի պատմութեան քննութիւնի պատրաստւելու համար կան գրութիւններ: Ընդանուր 18 հարցումներ 3 նիւթերի մասին եւ ամեն նիւթի վերաբերեալ 6 հարցում: 3 ճիշդ պատասխան ամեն մէկ նիւթից, կամ ընդհանուր 12 ճիշդ պատասխան 18 հարցումից յաջողութեան պայմանն է (անգամներ մասնակցելու կարելիութիւնով): Հարցումները կուղղւեն քանի մը պատասխաններով:

Բացառութիւններ՝ գերմաներէն լեզւի համար հաստատագիր պէտք չունեն այն անձեր, որոնք կարող են փաստել իրենց բարձր տարիքը կամ անառողջութիւնը:

Գերմաներէն լեզւի մէջ յաջող դրոցական երեխաները նոյնպէս ազատումեն են այս պատասխանատւութիւնից:

Դատելով - Աստրիայի քաղաքացիություն կարող են ստանալ այդ իրավիճակում գտնուող անձերը, յետևեալ հիմնական պայմաններով:

1. Այն անձերը որոնք ունեն գիտական, տնտեսագիտական, գեղարվեստական եւ սպորտային բնագավառներում, սպասուած **արտասահման կարողություններ**, կը ստանան առանց սպասման ժամկետի Աստրիայի քաղաքացիություն, եթէ երկիրը **հետաքրքրություն** ունենայ այդ բնագավառների նկատմամբ (կը հաստատուեն **Աստրիական կառուարություն** կողմից):
2. Առանց սպասման ժամկետի քաղաքացիություն կստանան այն անձեր, որոնք 10 տարի շարունակ ունեցել են աւստրիական քաղաքացիություն, բայց այն կորցրել են արտասահմանում գտնելու պատճառով:
3. Այն անձերը որոնք ունեն 10 տարւայ օրինաւոր եւ անդադար երկրում բնակութեան իրաւունք (որից 5 տարին ունեցել են մշտական կեցութեան իրաւունք):

Իրաւունքով - Յետևեալ անձերը կստանան Աստրիական քաղաքացիություն, վերը նշւած հիմնական պայմաններով:

1. Առանց սպասման ժամկետի - Դիմումով դիմած այն **անչափահաս եւ ամուրի** անձերը, որոնց ամենաքիչ **ծնողներից մէկը Աստրիական քաղաքացիություն** ունի (եթէ մշտական կեցութեան իրաւունք, կամ ընդունւած փախստականի իրաւունք, կամ թէ այստեղ ապրելու վկայագրի իրաւունք ունենայ):
2. Անդադար **6 տարի** բնակութեան իրաւունք ունեցող՝
 - **Աստրիական քաղաքացիների հետ ամուսնացած անձեր**, որոնք **ամենաքիչ** ապրում են **5 տարի** միասին;
 - **Ընդունւած փախստականները**;
 - **Եւրոպական երկիրներից** եկած քաղաքացիներ;
 - **Աստրիայում ծնւածները**;
 - Գիտական, տնտեսագիտական, գեղարվեստական եւ սպորտային բնագավառներում սպասուած **արտասահման կարողություններ** ունեցող անձեր, եթէ երկիրը **հետաքրքրություն** ունենայ այդ բնագավառների նկատմամբ;
3. Իրաւապէս բնակութեան իրաւունքով ամենաքիչ **15 տարի** (անդադար) Աստրիայի մէջ ապրած, մշտապէս անձնական եւ աշխատանքային ինտեգրացիեռն ունեցող անձեր:
4. Աստրիայում ամենաքիչ **30 տարի** (անդադար) **գրանցւած** անձեր:

C. Տարածումով (ընտանիքի անդամների վրայ)

Յետևեալ անձերը կստանան Աստրիական քաղաքացիություն, վերը նշւած հիմնական պայմաններով:

1. Ամուսնությունից ծնւած **երեխաները**, կնոջ ապօրինի երեխաները, տղամարդու ապօրինի երեխաները, երբ հայրը հոգածութեան իրաւատու է, ինչպէս նաեւ որդեգրած երեխաները, **անչափահասները** եւ ամուրիները, որոնք օրինական բնակւում են երկրում (առանց ժամկետի):
2. Ամենաքիչ 5 տարի **ամուսնացած անձեր**, որոնք ապրում են միասին նոյն բնակարանում եւ 6 տարի օրինական բնակութեան իրաւունք ունեն: (**մշտական կեցութեան իրաւունք, կամ ընդունւած փախստականի իրաւունք, կամ թէ այստեղ ապրելու վկայագրի իրաւունք ունենայ անձեր**)

Որովհետեւ այս տեղեկությունները համառոտ գրւած են, Կը խնթրենք մանրամասությունները տեղեկանալու համար դիմեցէք Staatsbürgerschaftsbehörde, MA 35, Dresdner Str. 93/Block C, 1200 Wien կամ Beratungszentrum für Migranten und Migrantinnen, եւ կը նշենք որ,եթէ հանդերձ մեր ուշադրութեան, սխալներ գտնեն, պատասխանատություն չենք կրել:

Männer und Frauen: 1010 Wien, Hoher Markt 8/4/2 Tel: 712 56 04 http://www.migrant.at E-Mail: migrant@migrant.at	Frauen: 1010 Wien, Marc Aurel Straße 2a/6/2/10 Tel: 982 33 08 http://www.migrant.at E-Mail: migrantin@migrant.at	
Diese Publikation wird aus Mitteln des Arbeitsmarktservice (und des Europäischen Sozialfonds) sowie der Magistratsabteilung 17 gefördert.		
		